բաղաստած էր պատուաւոր պահակախումբը Ավչերոնեան գնդի խմբից։ Պալատի առաջ հրապարակի վերայ ներկայացան տեղական բանակի զօրքերի դինուորական աստիճանաւորները, քաղաքացիական Ա և Բ դասակարգի աստիճանաւորները, Բադուի նահանգի Հայոց Առաջնորդը իւր հոգևորականութեան հետ, Բադուայ նահանգի ազնուականութեան ներկայացուցիչները, և Ջիրվանսկի խանը, Կերօսինի գործարանատէրերը, Բադուի, Դաղստանի և Անդրկասպեան նահանգների պատգամաւորները։ Փողոցի միւս կողմից դասակարգերի բաժանուած կանգնած էին տեղական դպրոցների ուսանողուհիները և ուսանողները։ Նոցին Մեծութիւնները բարեհաճեցին անցնել դէպի ներկայացած անձնաւորութիւնները և պատգամաւորութիւնները. Թագաւոր Կայսրը նոցանից մի քանիսին արժանացրեց ողորմած խօսքերով ընդունելութեան. ի թիւս որոց և Բադուի նահանգի Հայոց Առաջնորդին։

Բադուի բօրսայի վաճառականներից կազմուած մասնաժողովի կողմից նախագահ Ադամեանցը արժանացաւ բաղդի մատուցանել Նոցին Մեծութիւններին հաց ու աղ։ Հացը արծաթեայ ընտիր սկուտղի մէջ, որոյ միջի նկարն էր գործարան, չոգենաւ, եւայլն, և Նոցին Մեծութիւնների անուանական սկզբնատառերը «Ա» «Մ.» իսկ աղը մի աղամանի մէջ, որ շինուած էր ռուսական ճաշակով և տիպ ձևով, որի վերայ կանգնած էր արծիւը՝ ունելով նշանագրերը «Ա.» «Մ.» որոյ կափարիչի վերայ գրուած էր «Բադուի բօրսայի վաճառականութիւնից»։

Պատգամաւորութիւնները արժանացան բաղդի Նոցին Մեծութիւններին մատուցանել հետեւեալ ընծայաբերութիւնները.

Պատգամաւորութիւնը Թիմիր – Խան Ջուրա քաղաքի, Դէրբէնդի և Պետրովսկու մատոյց աղ ու հաց արծաթեայ ընտիր սկուտղի մէջ։ Դաղստանի շէնների բնակիչները աղ ու հաց մատուցին պղպեայ սկուտղի վերայ՝ ոսկի բանուածքով, մէջ տեղը Դաղստանի շրջանի դրօշը։ Թագաժառանգին մատուցին մի սուր՝ հին շեղբով՝ պատեանը սեւ կոտոշից՝ ոսկի բանուածքով սեւ տի վերայ։ Պատգամաւորութիւնը միջին Ասիայի ազգարնակութեան բաղդ ունեցաւ մատուցանել Նոցին Մեծու-